ՀՏԴ 93

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԸ (ՀՕՖ) ԵՎ ԱՐՑԱԽԸ

Ա.Վ. Վարդանյան
Պատմության ամբիոն

Կան պատմագիտական առանձին բնագավառներ, որոնք կարոտ են հիմնավոր ուսումնասիրության: Դրանցից է Սփյուռք-Արցախ հարաբերությունների պատմությունը, մի բնագավառ, որի նշանակությունը հայ ժողովրդի պատմության համար դժվար է գերագահատել: Սույն հոդվածը մի համեստ քայլ է այդ ուղղությամբ: Հաստատ շարադրված է ժամանակակից հայկական Սփյուռքի բարեգործական կազմակերպություններից մեկի՝ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) մարդասիրական առաքելությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Հոդվածը գրվել է ՀՀ Ազգային գրադարանից եւ Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղից ձեռք բերված նյութերի հիման վրա, որի համար շնորհակալ ենք ՀՕՖ-ի մամուլի քարտուղար Լեւոն Լաճիկյանից:

Հայաստանի Հանրապետության անկախացումից եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից հետո Հայրենիք-Սփյուռք կամ Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների մեջ վերացան նախկինում եղած տարբեր տեսակի քաղաքական խոչընդոտները եւ նոր աստիճանի հասան բազմաբնույթ հարաբերությունները: Այդ հարաբերություններում կարեւոր դեր են կատարում սփյուռքահայ հասարակական-քաղաքական, մշակութային, բարեգործական, ինքնեցական կազմակերպությունները, որոնք անգնահատելի օգնություն ցույց տվեցին եւ շարունակում են օգնել դժվարին պայմաններում գտնվող հայաստանաբնակ հայրենակիցներին եւ արցախահայությանը, առաջնահերթ նպատակ համարելով Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականությունները ամրապնդումը եւ զարգացումը: Սփյուռքահայ բարեգործական կազմակերպություններից Սփյուռք-Հայրենիք կապերի ամրապնդման եւ զարգացման գործում, հատկապես 1988թ. երկրաշարժից հետո, իր մեծ ավանդն ունի Հայ օգնության ֆոնդը:

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, անգլերեն Fund for Armenian Relief) Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Ստեղծվել է 1988թ. աղետալի երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում ԱՄՆ-ի Արեւելյան թեմի առաջնորդարանի (թեմական առաջնորդն էր Թորգոմ արք. Մանուկյանը) նախաձեռնությամբ: Սկզբնապես կոչվել է Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ: 1992-ից՝ Հայ օգնության ֆոնդ: Նպատակն է ավելի արդյունավետ դարձնել տեղի հայության եւ ամերիկյան հասարակության ու տարբեր կազմակերպությունների օգնությունը:[1] Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն առաջացավ բարեգործական առանձին կառույցի ձեւավորման, որը հնարավորություն կընձեռներ առաջնային օգնության ծրագրերը զուգակցելու հեռակարների հետ: 1993 թվականի փետրվարին գրանցվելով որպես ոչ շահութաբեր բարեգործական կազմակերպություն՝ Հայ օգնության ֆոնդը հնարավորություն ստացավ ծավալելու ինքնուրույն գործունեություն: Մշակվեց գործունեության այնպիսի հայեցակարգ, որի հիմքում դրված էր երկրի տնտեսական ինքնաբավության հասնելու գաղափարը:[2]

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու-Յորքում: Ֆոնդի նախագահը ԱՄՆ-ի Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանն է, ատենապետը՝ Գեւորգ Հովհաննյանը, գործադիր տնօրենը՝ Սիմոն-Եգնիկ Բալայանը, Հայաստանի մասնաճյուղի տնօրենը՝ Գրիգոր Թաթուլյանը:[3]

Լինելով Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի սոցիալական կառույցը՝ Հայ օգնության ֆոնդն իր գործադրած նպատակն է համարում նպաստել Մայր հայրենիքի տնտեսության զարգացմանն ու սոցիալական կյանքի բարելավմանը: «Ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ ապրելիս լինի, անմարելի պարտք ունի մայր հայրենիքի հանդեպնշվում է ՀՕՖ-ի նախագահ Խաժակ արք. Պարսամյանի ուղերձում: - Այս գործը վերջ չունի, այն տեւական է, գի ուղղված է հայրենիքի ապագային»:[4]

Սկզբնական շրջանում ՀՕՖ-ի ծրագրերը մարդասիրական բնույթի էին: 1989-1996 թվականներին ընդհանուր առմամբ ՀՕՖ-ի պարենային ծրագրերին ընդգրկվել են 2.200.000 մարդ:[5] Տարիների ընթացքում երկրի հետագա զարգացման տրամաբանությամբ թելադրված մարդասիրական օգնության ծրագրերը հետզհետե իրենց տեղը զիջում են զարգացման ծրագրերին: Պարենային լայնածավալ օգնության հետ մեկտեղ Հայ օգնության ֆոնդը մեծ թափով շարունակեց զարկ տալ դրանց՝ ընդ-

գծելով վերջիններիս առաջնայնությունն ու հեռանկարայնությունը իր հետագա գործունեության բոլոր ուղղություններում: Այդ ծրագրերը շոշափում են Հայաստանի եւ հայ ժողովրդի կենսական շահերը, կյանքի ամենատարբեր բնագավառները՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ եւ այլն:

Օգտվելով ԱՄՆ-ի կառավարության օգնությունից եւ մասնավոր աղբյուրների աջակցությունից 1989-2001 թվականներին որպես Հայաստանում մարդասիրական բազում ծրագրեր իրականացնող՝ ՀՕՖ-ը դարձավ առաջատար մարդասիրական կազմակերպություն, որի ներդրած օգնության ընդհանուր գումարը հասնում է 200 մլն ԱՄՆ դոլարի:[6] Այդ տարիների ընթացքում ՀՕՖ-ը մեծ օգնություն, աջակցություն է ցուցաբերել շատ կազմակերպությունների, ընտանիքների, մարդկանց:

Արցախահայությանը օգնելու նպատակով 1997 թվականի դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտում բացվեց Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի հայ օգնության ֆոնդի գրասենյակը:[7] Այստեղ նախատեսվում է իրականացնել այն բոլոր ծրագրերը, որոնք կատարվել են Հայաստանում եւ մարդասիրական օգնությունից բացի գարկ տալ զարգացման ծրագրերին ու ստեղծել նոր աշխատատեղեր: «Բոլոր դարաբաղցիները,-նշում է իր ուղերձում Խաչակ արք. Պարսամյանը,-նույնագութիից մինչեւ շարքային քաղաքացի, միակամ էին իրենց երկիրն ու տնտեսությունը շուտափույթ ոտքի կանգնեցնելու եւ շենացնելու հարցում: Նրանք սփյուռքահայ իրենց եղբայրներից ու քույրերից ակնկալում են օգնություն հատկապես նոր աշխատատեղեր բացելու եւ կիսակործան քաղաքացիական ու հոգեւոր կառույցների վերականգնման գործում»:[8]

1998թ. օգոստոսին Հայ օգնության ֆոնդի պատվիրակության Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում բժշկական օգնություն տրամադրվեց տեղի բուժհիմնարկներին: Այն ներառում էր շուրջ 250 արկղ տարբեր տեսակի բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, թթվածնային փողակներ, անգգայացման դիմակներ, հիվանդների խնամքի համար անհրաժեշտ այլ պիտույքներ, նաեւ մանկական վիտամիններ: Բնոն ամբողջությամբ հանձնվեց ԼՂՀ առողջապահության նախարարությանը, որի միջոցով էլ բաժանվեց հանրապետության տարբեր շրջանների ու քաղաքների բուժհիմնարկներին:

«Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ծրագրով ՀՕՖ-ը 1995թ. սկսած ամեն տարի իրականացնում է ամերիկահայ երիտասարդ մասնագետներից կազմված խմբերի այցը Մայր հայրենիք: Ծրագրի նպատակն է երիտասարդներին ծանոթացնել ոչ միայն հայրենի երկրի տեսարժան վայրերին, այլ նաեւ նրանց հաղորդակից դարձնել անկախ Հայաստանի Հանրապետության այսօրվա կյանքին, առկա խնդիրներին եւ դժվարություններին: Այցելության ընթացքում ամերիկահայ երիտասարդները լցվում են մեծ հայրենասիրությամբ եւ հայրենիքը օգնելու պատրաստակամությամբ: Ամերիկահայ երիտասարդների մի խումբ էլ 2002թ. այցելել է Արցախ: Նման կարգի միջոցառումը ազգային ինքնաճանաչման ու հպարտության հնարավորություն է ստեղծում հայ երիտասարդների համար, նպաստում ազգապահպանման գործին:

2000 թվականից մեծ աշխատանք է կատարում Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո ստեղծված եւ նրա շրջանակներում գործող Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը, որը նպատակ ունի կասեցնել գիտական մտքի արտահոսքը հայրենիքից եւ զարկ տալ հայ գիտության ու հետազոտական աշխատանքների զարգացմանը դրամաշնորհներ տրամադրելու միջոցով:

ՀՕՖ-ի 2002թ. տրամադրած գիտական դրամաշնորհներից մեկը հնարավոր դարձրեց ամբողջացնել Արցախի մանրատեղանունների հավաքագրման գործը: Բանն այն է, որ մինչեւ այժմ գիտական շրջանակները առավելապես կարեւորել են խոշոր տեղանունները եւ, որպես կանոն, ուշադրությունից դուրս են մնացել հայկական լեռնաշխարհի մանրատեղանունները (միկրոտոպոնիմներ), այսինքն՝ բնակավայրերի թաղամասերի, յուրաքանչյուր սար ու ձորի, գետ ու վտակի, աղբյուր ու ջրվեժի, հանդ ու արտի անվանումները: Ի տարբերություն տեղանունների, կախված բնակչության տեղաշարժերից (բռնագաղթ, արտագաղթ, կոտորած), մանրատեղանունները ավելի հաճախ եւ դյուրությամբ են մոռացության մատնվում: 1915 թվականից հետո այդ ճակատագրին են արժանացել Պատմական Հայաստանի մեծագույն հատվածի Արեւմտյան Հայաստանի բազմաուհազար մանրատեղանունները: Կանգնեցին տարիներ եւ նույն ճակատագրին կարժանանային նաեւ Հյուսիսային Արցախի տեղանունները: Շնորհիվ Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամի տրամադրած գիտական դրամաշնորհի հուշարձանագնա Սամվել Կարապետյանին հաջողվեց հյուսիսային արգավանդ գյուղերի հաղորդած արժեքավոր տեղեկությունների հիման վրա հավաքագրել եւ բարտեզագրել ավելի քան 2000 մանրատեղանուն: Աշխա-

տանքն ամբողջացնելու նպատակով եղած նյութը համալրվից նաեւ Արցախի կենտրոնական եւ հարավային հատվածներից հավաքագրված մանրատեղանունններով: Աղբյուրներում «Արցախի մանրատեղանունները» աշխատության մեջ ներառվեց մինչեւ 5800 մանրատեղանուն համապատասխան գունավոր լուսանկարներով եւ բարտեզներով:[10] «Հայոց գիտության վաղեմի փառավոր ավանդությունները վերականգնելու առումով դժվար է գերագահատել Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո ստեղծված Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամի դերը,-գրում է ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Մարգսյանը: -Այն ֆինանսական աջակցությունից զատ նաեւ բարոյական մեծ ուժ է պարունակում իր մեջ՝ բաջալերելով հատկապես գիտնականների նոր սերնդի ի հայտ գալուն եւ մեր գիտության նիհտասարդացմանը»:[11]

2002թ. հոկտեմբեր ամսից Հայ օգնության ֆոնդը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ ձեռնամուխ եղավ «Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» լայնածավալ ծրագրի իրագործմանը: Ծրագիրը կոչված է վերակառուցելու պատերազմի հետեւանքով մեծապես տուժած ենթակառուցվածքները, առողջապահության եւ կրթության բնագավառները: Ավերվել եւ վնասվել էին տասնյակ դպրոցներ եւ առողջապահական հիմնարկներ, շարքից դուրս էին եկել խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման համակարգերը: Ենթադրվում է հետեւողական աշխատանք նշյալ կառուցվածքների, ինչպես նաեւ տարատեսակ կացարանների կառուցման եւ նորոգման ուղղությամբ: Ծրագիրը թույլ է տալիս նաեւ միջոցներ տրամադրել բուժանձնակազմերի վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու եւ անհրաժեշտ բուժսարքավորումներ ու դեղամիջոցներ ձեռք բերելու ուղղությամբ:

«Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղին» ծրագրին հատկացրած գումարի չափը 15 մլն ամերիկյան դոլար է, կատարման ժամկետը՝ հինգ տարի: «Դրամաշնորհի ներշնչող չափը,-նշում է ՀՕԵ-ի գործադիր տնօրեն Սիմոն-Եգնիկ Բալյանը,-թույլ կտա մինչեւ ծրագրի ավարտը լիովին վերականգնել Լեռնային Ղարաբաղի գոյություն ունեցող ենթակառուցվածքները»:[12] Ներկայումս Ստեփանակերտի Հայ օգնության ֆոնդի գրասենյակը արդեն ավարտել է անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները եւ շուտով կսկսի ծրագրի իրագործումը, որը կնպաստի Արցախի հետագա հաջողություններին եւ զարգացմանը:

Ամփոփում

Հայ օգնության ֆոնդը (ՀՕԵ) Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի բարեգործական կազմակերպություն է: Ստեղծվել է 1988-ի աղետալի երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում: ՀՕԵ-ն իր մասնաճյուղերը ունի Երեւանում, Գյումրիում եւ Ստեփանակերտում: Նա անգնահատելի օգնություն է տրամադրում Հայաստանի հանրապետությանը եւ Արցախին: ՀՕԵ-ի նպատակն է ՀՀ եւ ԼՂՀ պետականությունների ամրապնդումը եւ զարգացումը:

Резюме

Фонд помощи Армении (ФПА) благотворительная организация Восточной епархии США Армянской апостольской церкви. Основана в Нью Йорке непосредственно после землетрясения 1988г. ФПА оказывает неоценимую помощь РА и Арцаху. Цель фонда-осуществление благотворительной деятельности направленной на укрепление и развитие государственности РА и НКР.

Գրականություն

1. Սփյուռքահայ կազմակերպություններ, Եր., 2002, 66 էջ
2. ՀՕԵ-ի լրատվական կենտրոն, 2002, 1 էջ
3. Նույն տեղում
4. «Ազգ», 10 հուլիսի 1998
5. Հայ օգնության ֆոնդ. Տարեկան տեղեկագիր, 1996, 4 էջ
6. FUND FOR ARMENIAN RELIEF, Annual Report, 2002, 2 p
7. «Հայք», 26 դեկտեմբերի 1997
8. Հայ օգնության ֆոնդ. Տարեկան տեղեկագիր, 1997, 2 էջ
9. «Ազգ», 15 օգոստոսի 1998
9. Հայ օգնության ֆոնդ. Տարեկան տեղեկագիր, 2001-2002, 16 էջ
10. FUND FOR ARMENIAN RELIEF, Annual Report, 2002, 19 p
11. Նույն տեղում, 3 էջ